ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

**Արձանագրություն N 3**

***«ՇՄԳՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի***

ք. Գյումրի 29 հունիսի 2017թ., ժ 12:00

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝*** ***Կարեն Հմայակյան***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի պատասխանատու-ԳՊ/ԳԱՊ*

***Անդամներ՝***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ-ԳՊ/ԳԱ* ***Անժիկ Պապոյան***

***Անահիտ Մելքոնյան***

*Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ-ԳՊ/ԲԱ* ***Հայկուհի Հովհաննիսյան***

***Կարեն Ասատրյան***

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ***Նվարդ Բադալյան***

*Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող-ԳՊ/Մհ*

1. ***Ընդունել ի գիտություն***

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 43-րդ կետի 3և 4 ենթակետերի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 26.06.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:
Գնահատող հանձնաժողովի 23.06.2017թ. թիվ 3 որոշմամբ էլեկտրոնային փոստի միջոցով 26.06.2017թ. <<Ֆլեշ>> ՍՊԸ և <<Մաքսիուր>> ՍՊԸ-ին ծանուցվել է առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի "գ" պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը/հավելված 6 և 6.1/ /կցվում է/:

2. ***Հանձնաժողովն արձանագրեց***

Կարգով սահմանված ժամկետումԿոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պաևտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

<<Ֆլեշ>> ՍՊԸ և <<Մաքսիուր>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

Ներկայացված փաստաթղթերը գնահատման թերթիկի հետ միասին հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվել են հանձնաժողովի անդամներին գնահատելու համար:

***3. Հանձնաժողովը որոշեց***
***Հիմք ընդունելով վերոգրյալը՝***

***3.1*** Ընտրված մասնակիցներ ճանաչել թիվ 1 չափաբաժին-<<Ֆլեշ>> ՍՊԸ, թիվ 2 չափաբաժին-<<Մաքսիուր>> ՍՊԸ-ին

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

***3.2*** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

***3.3*** Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի՝ Նախագահ՝ | Կարեն Հմայակյան | [signature] |
| Անդամներ՝ | Անժիկ Պապոյան | [signature] |
| | Անահիտ Մելքոնյան | [signature] |
| | Հայկուհի Հովհաննիսյան | [signature] |
| | Կարեն Ասատրյան | [signature] |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Նվարդ Բադալյան | [signature] |